

ԿՐՈՆԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԽՈՐ է

(Փոխադրութիւն Նաումանից)

Փոքր ի շատէ դիտեմք և ի փոքր
ի շատէ մարգարէանամք:

Ա. Կորնթ. ԺԿ. 9.

Պօղոսն իրաւունք ունի իւր ժամանակի գիտութիւնը պակասաւոր անուանել։ Մի հայեացըն անգամ գէպի յունա-հռովմէական գիտնական գրքերը, բաւական է պարզելու, թէ որքան անկատար էր նորա ժամանակի գիտութիւնը։ Ի՞նչ գաղափար ունէին նոքա տիեզերքի մասին։ Ի՞նչ գիտէին նոքա երկրագնդի, արեգակի, կլիմայի պատճառների, կենդանի մարմինների, բնութեան, բնախօսութեան, մատեմատիկայի, քիմիայի մասին։ Ինչ-քան խեղճ էր նոցա արուեստագիտութիւնը (Technik)։ Այսօր գպրոցական երեխան աւելի գիտէ երկնակամարի մասին քան Արիստոտէլը, և ելեքտրական կայարանի իւրաքանչիւր հասարակ վարպետ աւելի քան Արքիմեդը։ Ո՞րքան խեղճ էին հները, յետամնաց։ Մենք թափանցել ենք գիտութեան խորքերը, բնութեան գաղտնիքը բաց է մեր առաջ, լուսաւորութիւնը ամէն ինչ պարզել է։ Մեզ այլ ևս պէտք չէ Պօղոսի հաւատը, որովհետեւ մենք այլ ևս նրա նման անգէտ չենք։ Կեցցէ նոր ժամանակի գիտութիւնը։

Բայց արդեօք այդպէս է, հասել ենք արդէն գիտութեան ծայրը։ Բոլոր իսկական գիտնականները ոչ Գիտութեան ամէն ինչ յաղթահարող ու նուաճող զօրութեան

հաւատում են միայն նրանք, որոնք ճիշդ գաղափար չունին նորա մասին, որոնք տգետ են և իրենց տղիտութեան հետ յաւակնոտ, Մարդկային մտքի և որոնումների լաւագոյն գիտնականները Պօղոսի հետ կրկնում են «Փոքրի ի շատէ զիտեմք», Նորա գիտութեան մեծ աշխախատանքի մէջ համեստութիւն են ուսել, Նորա շատ բան գիտեն, բայց չգիտցածը աւելի շատ է, Կեանքի գաղտնիքը խորհուրդ է մնացել, ինչպէս և առաջ, որքան և գիտութիւնը առաջ է գնացել: Ո՞րտեղից և ուրս Մեր գիտութիւնը նոյնպէս պակասաւոր է, մի բեկոր է, ինչպէս և հին մարդկութեանը:

Կարելի է երկու կամ երեք օր առաջ փոքր ի շատէ գուշակել եղանակի փոփոխութեան մասին, կարելի է մօտաւորապէս որոշել ո՞չ և է գործի ընթացքը կարճ ժամանակի համար, բայց ով կարող է իմանալ պատմաւթեան ուղին տասնեակ տարիների կամ դարերի համար: Ապագան Աստուծոյ ձեռքն է մնում: Մեծ նպատակներն ու յոյսերը կապուած են միշտ հաւատոյ հետ: Մեր առաջ միայն խաւարն է իշխում և ինչ կլինէր մեր ընթացքը, եթէ չհաւատայինք տիեզերքի և նորա կառավարի բարոյական կարգաւորութեան: Առանց այս գաղափարի միայն յուսահատութիւնն է մեր բաժինը, Ոչ մի գիտութիւն չի կարող խախտել այս հաւատի անհրաժեշտութեան գաղափարը: Մենք ուրախ ենք ազատ գիտութեան յառաջադիմութեամբ, գատապարտում ենք ով սահմանափակում է քննադատութիւնը, ազատ հետախուզութիւնը, պատրաստ ենք կործանել ամէն ինչ, որ հաստատուած էր մեր մէջ, եթէ ճշմարտութիւնը պահանջում է այդ, բայց հոգեկան յառաջադիմութիւնը չի հասնում մինչև հաւատոյ ազբիւրը, տիեզերքի գաղտնիքը չի լուծւում: Որքան բարձրանայ մարդկային հոգին իւր կրթութեամբ ինքն իրան զգում է խեղճ և պակասաւոր:

Գիտութիւնը մաքրում է մարդկանց: Գիտութեան յառաջադիմութիւնը զօրութիւն ունի ստորութեան և գուեհիութեան հոգին ոչնչացնելու: Բարոյապէս նոյնչափ

բարձրացել ենք, որչափ ընդարձակուել են մեր ծանօթութիւնները, որչափ խելօք ենք դարձել: Ոչ ոք չի կարող այս հարցերին առանց տատանուելու դրական պատասխան տալ: Յատկապէս բարյոյական խնդիրների մէջ աւելի պարզ է, գիտութիւնը սահմանաւոր է և մի բեկոր միայն: Եթէ շենք կամենում խելօք գիշատիչ կենդանիներ դառնալ, մեր սրտերը պիտի բանանք Փրկչի անձնաւորութեան համար: Նորա խօսքը ամենից խելօք և գիտուն մարդու համար նոյնպէս նշանակալից է: Առանց իմ ոչինչ կարէք առնելու: Մեծ ու օգտակար գործ կատարելու համար մարդիկ պէտք ունին սուրբ և անձնական իդէալների: Բայց գիտութիւնն ինքնըստինքեան այդպիսի իդէալներ չի տալիս: Դոքա հաւատից են բղխում:

Գ. Պ. ԾԱԳԱԼԻՔԵԱՆ

Ա. ԷՉՄԻԾԵՑՆԻ ՄԻԵԲԵՆՈՒԹԻՒՆԸ

Ա.

Անցեալ համարի «Հայոց հայրապետական աթուը» վերնագրով յօդուածի մէջ վորձել էինք ամփոփել ամենայն Հայոց հայրապետութեան և նորա աթուակալի նշանակութիւնը ազգային, կրօնական և քաղաքակրթական տեսակէտներով: Շատ համառօտ կերպով յայտնել էինք, որ մեր ազգային եկեղեցու վերակենդանութեան և պայծառութեան հետ կապուած իզներն ու տենչերն իրագործուել կարող են խելացի կերպով միայն Հայրապետի անմիջական ղեկավարութեամբ: Այս անգամ կամենում ենք խօսել այն գործօններից մէկի մասին, որի ձեռքով հայրապետական աթուի գաղափարը թանձրանում է կեանքի մէջ և պտղաբեր դառնում: